Արձանագրություն N04

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72 շ.
10.06.2026թ. ժամը՝ 16:30
Նիստին մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ Ն. Աբազյան
Անդամներ՝ Հ. Մելքումյանս ,Ա. Սարիբեկյան,Ա.Ռուբենյան, Մ. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Ա. Գարսևանյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ն. Աբազյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0

2. **Հաղթող ճանաչված ընկերության կատարված աշխատանքների և անգործության և պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ**

2026 թվականի մարտի 18-ին Ակունքի համայնքապետարանի կողմից **ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01** ծածկագրով <<**ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ>> ձեռքբերման նպատակով** կազմակերպված գնանշման հարցման ընթացքում հայտ էին ներկայացրել 11/տասնմեկ/ ընկերություն՝ <<Ա.Ա.Մ. 33>> ՍՊԸ, «Ռ ԵՎ Հ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ ԵՎ «ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ, <<ԲԱԼԱՀՈՎԻՏ 1>> ՍՊԸ, <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ, <<ԳԱՌԱՆՏ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ, <<Եվրո Թեքնիքս>> ՍՊԸ ԵՎ <<Էմթիեյ>> ՍՊԸ ՀԳ, <<ԿՈՏԱՅՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ>> ՍՊԸ, <<ՃԱՆԱՊԱՐՀ ԳՐՈՒՊ >> ՍՊԸ, <<ՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ>>ՍՊԸ, <<ՈՒՐԲԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ>>ՍՊԸ, << Ս.Տ.Ս ԳՐՈՒՊ>> ՍՊԸ և <<Ֆ Տ Դ-ՇԻՆ>> ՍՊԸ:

Ընտրված մասնակից է որոշվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից 1-ին չափաբաժնի համար նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝ <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ն:

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01 ծածկագրով <<ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ>> նախահաշվային գինը կազմում է 9 645 336 /ինը միլիոն վեց հայուր քառասունհինգ հազար երեք հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամ, <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գինը 6 465 000 /Վեց միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ է, ներառյա ԱԱՀ-ն:

ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01 ծածկագրով պայմանագիրը կնքվել է 01/04/2026թ-ին և տրվել աշխատանքների մեկնարկը: 2026թվականի ապրիլի 29-ին Ակունք համայնքի Ակունք, Նոր գյուղ, Կոտայք ,Կապուտան և Զառ բնակավայրերի մի շարք գլխավոր ճանապարհների երթևեկելի մասերում ճանապարհների քանդված, ճաքած, մասերը կտրվել, մաքրվել են և սակայն միայն 2026թվականի մայիսի 20-ին Ակունք համայնքի

Նոր գյուղ բնակավայրի Աբովյան-Նոր գյուղ-Մայակովսի ճանապարհահատվածի հատման վայրից մինչ Ակունք համայնք գյուղ Նոր գյուղ 6-րդ փողոց թիվ 2/1 շինության հարակից տարածք կատարվել են փոսային նորոգման աշխատանքներ, իսկ մնացած հատվածներում մինչ օրս ոչ մի աշխատանքներ չեն կատարվել:
2026թվականի ապրիլի 29-ին Ակունք համայնքի Ակունք, Նոր գյուղ, Կոտայք ,Կապուտան և Զառ բնակավայրերի մի շարք գլխավոր ճանապարհների երթևեկելի կտրված մասերը 28 օրվա ընթացքում քայքայվել են և առաջացրել խորը փոսեր, որոնք խանգարում են բնակչության բնականոն տեղաշարժին:

2026 թվականի մայիսի 12-ին <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ին գրավոր ծանուցվել է, որ , եռօրյա ժամկետում կատարել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01>> ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները՝ <<Ակունք համայնքի փոսային նորոգման աշխատանքները>>, հետագա խնդիրներից խուսափելու համար և <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ի կողմից 2026թվականի մայիսի 13-ին պատասխան գրությամբ մեզ տեղեկացրել է, որ մայիսի 15-ից պարտավորվում է շարունակել և պատշաճ, պայմանագրի դրույթներին համապատասխան կատարել ծավալաթերթով նախատեսված աշխատանքները սույն թվականի մայիսի 15-ից, այնուհետև 2026 թվականի մայիսի 29-ին <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ին գրավոր ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարել <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01>> ծածկագրով պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները՝ <<Ակունք համայնքի փոսային նորոգման աշխատանքները>>, հակառակ դեպքում համաձայն ՀՀ << Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրեսգրքի 408-րդ հոդվածի՝ << Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը>> , 466-րդ հոդվածի 3-րդ մասի ՝ << Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>> <<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի կլուծվի և Ձեր կազմակերպությունը՝<<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ն կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, սակայն մինչ այժմ <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ն դրսևորել է բացառապես անգործություն և խաթարել Ակունքի համայնքապետարանի բնականոն աշխատանքը և բնակչության տեղաշարժը:
Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետը և 8-րդ կետի 8.11 ենթակետը, համաձայն ՀՀ << Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրեսգրքի 408-րդ հոդվածի՝ << Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող

այլ պայմանների խախտմամբ) կատարելը>> , 466-րդ հոդվածի 3-րդ մասի ՝ << Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված>> ՀՀ Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարանը միակողմանի լուծված է համարում Ձեզ հետ 01/04/2026թ . կնքված թիվ ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01-01 գնման պայմանագիրը՝ 1-ին չափաբաժնի մասով և Ձեր կազմակերպությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
Այս կապակցությամբ տեղեկացնում ենք, որ.
- <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում ՀՀ Ակունքի համայնքապետարանի հաշվին վճարել 1 446 800 / մեկ միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ որակավորման և 964 534/ ինը հարյուր վաթսունչորս հազար հինգ հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովումները, գանձապետական հաշիվներին փոխանցվելու դեպքում չի կայացվի <<ԲՈՌՍԱ >> ՍՊԸ -ին գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում (վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզի Ակունքի համայնքապետարան):

Ն. Աբազյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **<<ԿՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-26/01>>** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Գարսևանյանին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ Ն. Աբազյան _____

Անդամներ՝ Հ. Մելքումյան _____

Մ. Սարիբեկյան _____

Ա. Ռուբենյան _____

Մ. Հովհաննիսյան _____

Քարտուղար՝ Ա. Գարսևանյան _____